

« գայ, աշունն և զարունն կու գայ. զՋերմն
« և զձմեռն չի սիրեր. և ապա զարձեալ
« երթալոյ ատենն պիտի Հնախնայանայ ծովն
« անցանի. յայնժամ շատքն ծովահնդձ կու
« լինին, և սակաւն ձորով գերծանի ի յան-
« ցանելն: Յորժամ որ մարախ անկանի
« աշխարհ մի, և երթեալ ի Սֆէհան (Սպա-
« հան) քաղաքն, անդ ջուր մի կայ, այն
« ջրէն կու բերեն, և կախեն ի ծառ մի
« ամանովն. նոյն ժամայն Աստուծոյ հրամա-
« նան Սըղընդըն գան երամով, և զմա-
« րախն ջարդեն, անշափ որ կտուց և ոտլին
« նոցա արինաթաթախ լինի. խոնձին և
« յետոյ երթեալ այլի սկսանին սատակել
« զմարախն: Եւ այս ջուրս ի Ոսմանճըղ
« (Օսմանճըղ) քաղաքն այլ կայ, զոր ի Ա-
« նատօլին է (Սեբաստիոյ նահանգին մէջ):
« Եւ այս ջրիս բերելն արուեստ կայ զի ջուրն
« երթեալ խնդրեն ի շէխէն՝ որ կու պահէ
« զայն ջուրհորն, և աղօթս մատուցանէ
« Աստուծոյ, և ապա իւր ձեռքն առնու
« զջուրն, և խնդրողին աման ընու. և նա
« երթեալ տանի աշխարհն իւր. և այնպէս
« տանի՝ որ զջուրն գետին չի գներ, այլ որ
« տեղ որ օթեաւն կու առնէ՝ ի բարձր տեղ
« մի կախէ ամանովն զջուրն. և յորժամ
« երթալոյ լինի ի ճանապարհն՝ յայնժամ
« առնու, և բարձր ի գլուխն վերացընէ, և
« այնպէս տանի մինչեւ ինչ տեղ որ երթալու
« էր: Եւ յորժամ առնուն զջուրն, և ամառ
« և այլ առելի ճանապարհ տանին, յայնժամ
« հրամանաւն Աստուծոյ թոշունքերս այս՝
« յետեւանց ի հետն կու գան, մինչեւ որ
« տեղ որ երթալ: — Թէ ուզես զթոշունս
« այս պահել մէջ զաֆէսին, որպէս Ղարայ-
« զաւուխն պահէ. զի անուշ ձայն կու երգէ,
« որպէս զՊայըրդուշին: — Թէ որ Սըղըր-
« ճըքին միտն ուտէ աչից լուսն առաւելնայ:
« Եւ թէ զմիտն չորացընես և ծեծես և ա-
« նօթուց ջրով խմես, մահու խոցէն ազա-
« տիս: Եւ յորժամ ոսկերքն այրեն՝ հող
« լինի, խոցին վրայ ցանեն, զմարախն կտրէ
« և չորացընէ: — Զարմանք է որ մեր
« թոշաբանն չէ լսած կամ չէ յիշած իր ազգի
« հայրենեաց այդ յատուկ հան, Մասիսու
« Ս. Յակոբայ աղբիւրն, և անկէ՝ մեծ հան-

դիսով և աղօթիւք բերուած և հեռաւոր եր-
կիրներ տարուած մարախաշարդ ջուրը:

Ի, իս, իք, իգ. մանրիկ գոյնզգոյն և
անուշաձայն թոշնեկաց վրայօք՝ երեք չորս
տողով համառօտ գրէ Աբրահամ: Աստուծոյ
վերջը կարգէ (իւ) Իպիքի թուրք բառով.
որոյ անունն յայտնէ բբուկ ունող թոշուն
մի, որ կըրնար ըլլալ հայերէն Յոպուկ կո-
չուածն. բայց զսա մեր հեղինակն յետ ա-
մենայն թոշնոց դատած է (յար), այս հայ ա-
նուամբ թուրքարէն այլ Հոքիոնք: — Լա թուով
այլ յիշէ թուրք անուամբ Պիտուշու թոշունը,
բայց Իպիքիին այլ ստորագրութեան վերջը՝
Պիթնուս կոչէ, նոյնպէս Պիթնուսի ստորա-
գրութեան մէջ այլ տեղ մի կ'ըսէ, « Թէ... զՊիթ-
« նուսին լուէրն՝ որ է թուրքի բառով Իպիք,
« չորացընեն ծեծեն », և այլն. տարակոյս
բերէ, թէ Իպիք և Պիթնու նոյն են, թէ Իպիքն՝
Պիթնուսի բբուկն է, որ հայերէն լուէր կ'ը-
սուի եղեր, որ մեզ անծանօթ է, և զայն
խմանալու է և ոչ փոքրիկ ծանօթ ճճին՝ լու:
Զկարնալով հաստատել Աբրահամու ըսած
ներուն ստոյգ թէ շփոթ ըլլալը, կարծեմք՝ թէ
Իպիքիին ըլլայ Յոպուկ ըստ մեզ, Բիդնուսն
թերեւս Կիու, Հուլթուլին այլ Հօտօտ. զի
այս յետին անուան այլ հանդիպած եմք ի
հայերէն (չեմ յիշեր ի՞նչ) գրուածի մէջ:
Աբրահամ այս երեք թոշնոց և ոչ մէկին
տեսքը և չափը կու ստորագրէ, այլ միայն
բնութիւնը կամ յատկութիւնները, և անոնց
այլեւայլ մասանց բժշկական օգուտները:

Բայց զարմանալի է այս տեղ մեր թոշնա-
բանին գիտութիւնն. թուրք լեզուի հմուտ
վարպետ մի՞ փնտռելով Պիդնուսի անունը
բառագրոց մէջ, միայն Վէֆիդ Ահմէտի ա-
նունի Լէձձէի օտեւանի անուանեալ բառագրոց
մէջ գտեր է, անասնոց ցեղին վերաբերեալ,
իրեւ տեսակ մի Բորեան (Hyène)! Կ'արժէ
ուրեմն Աբրահամու գրածը լսել. « Պիթնուս.
« թոշնոց մէջն այնպէս թոշուն չկայ՝ որ...
« ամէն ժամն կու ձայնէ. մէջ գիշերուն կու
« ձայնէ և խմացընէ թէ գիշերն միջացաւ,
« այլի առաւօտն կ'իմացընէ: Եւ թէ որ Խոսո-
« դին ձայնէն արթննայ՝ այլ չի կարէր քնիլ:
« Եւ այլ սքանչելիքն այս է, որ տարին մէկ
« անգամ հաւիթ ածէ: Թէ տուն մի սպիտակ